10247

ՀԱՄԼԿՅԵՄ ԿԵՆՏԿՈՄԻ ՈՒԹԵՐՈՐԴ ՊԼԵՆՈՒՄԻ ՎԼՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ЗКСМ2
2-21

ՊԵՏՀՐԱՏ
ԽԱՂԱՓԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ • 1939

24 SEP 2009

Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք

1 DEC 2009

ՀԱՄԼԿՅԵՄ ԿԵՆՏԿՈՄԻ ՈՒԹԵՐՈՐԴ ՊԼԵՆՈՒՄԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՊԵՏՀՐԱՏ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1939

01 JUN 2013
10247

ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԼԿՅԵՄ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ VIII ՊԼԵՆՈՒՄԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

1939 թվի ապրիլի 7—13-ը կայացավ ՀամԼԿՅԵՄ Կենտրոնական Կոմիտեյի VIII պլենումը:

Պլենումը քննության առավ «ՀամԿ(բ)Կ XVIII համագումարի վորոշումների կապակցությամբ, ՀամԼԿՅԵՄ կազմակերպությունների աշխատանքների մասին» զեկուցումը—զեկուցող՝ ՀամԼԿՅԵՄ Կենտկոմի քարտուղար ընկ. Ն. Միխայլով և Բելոռուսիայի ԼԿՅԵՄ Կենտկոմի ու ՀամԼԿՅԵՄ Լենինգրադի մարզկոմի զեկուցումները՝ «Պրոպագանդայի վերաբերյալ ՀամԿ(բ)Կ Կենտկոմի և ՀամԼԿՅԵՄ Կենտկոմի վորոշման կատարման մասին»—զեկուցողներ՝ ընկ. ընկ. Ի. Յեֆրոյկին—Բելոռուսիայի ԼԿՅԵՄ Կենտկոմի քարտուղար՝ պրոպագանդայի գծով, Ի. Բուչուրին—ՀամԼԿՅԵՄ Լենինգրադի մարզկոմի քարտուղար՝ պրոպագանդայի գծով:

Զեկուցումների առթիվ ընդունված համապատասխան վորոշումները հրապարակվում են:

Պլենումը Կենտրոնական Կոմիտեյի անդամների կազմի մեջ մտցրեց և ՀամԼԿՅԵՄ Կենտկոմի բյուրոյի մեջ ընտրեց ընկ. ընկ. Ի. Տ. Գրիշինին, Ն. Ն. Կատկովին, Ա. Մ. Պեգովին, Ա. Ա. Պոլետայեվին:

Гос. Публ. Библиотека ՀՍՍՀ-ССР им. А. Мясникяна
3629
39

ՀԱՄԼԿՅԵՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

ՀԱՄԿ(Բ)Կ XVIII ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

ԸՆԴՈՒՆՎԱԾ Ե ՀԱՄԼԿՅԵՄ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ ՊԼԵՆՈՒՄՈՒՄ

Համամիութենական կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության XVIII համագումարը խոշորագույն իրադարձություն է մեր սոցիալիստական հայրենիքի պատմության մեջ, ամբողջ միջազգային կոմունիստական շարժման պատմության մեջ:

ՀամԿ(բ)Կ XVIII համագումարում ընկեր Ստալինի տված զեկուցումը մի մեծ գանձ է մարքսիզմ-լենինիզմի գանձարանում, մեր դարաշրջանի նշանավոր մի փաստաթուղթ, վորի մեջ ամփոփված են սոցիալիզմի հաստատման համար ԽՍՀՄ-ի աշխատավորների պայքարի արդյունքները և ծավալված է կոմունիստական հասարակությանն անցնելու ծրագիրը: Այդ մեծասքանչ ծրագիրը կոմսոմոլի անդամներին, ամբողջ խորհրդային յերիտասարդությանը, ինչպես և մեր ամբողջ ժողովրդին վոգեշնչում է հետագա պայքարի՝ հանուն կոմունիզմի հաղթության:

Ստալինյան հնգամյակների տարիների ընթացքում ԽՍՀՄ-ում ավարտված է արդյունաբերության և հողագործության տեխնիկական վերակառուցումը՝ նոր, ժամանակակից տեխնիկայի հիման վրա: Լիկվիդացիայի յեն յենթարկված շահագործող դասակարգերը և այդ դասակարգերը ծնող պատճառները: Բանվորները, գյուղացիները, ինտելիգենցիան համախմբված են մեկ համերաշխ ընտանիքի մեջ: Արդյունաբերության և գյուղատնտեսության վերելքը հասցրեց ժողովրդի նյութական և կուլտուրական դրության նոր աճման:

Ամրապնդված է ԽՍՀՄ-ի բոլոր ժողովուրդների բարեկամությունը: Ստեղծված և ամրապնդված է խորհրդային

հասարակության բարոյական–քաղաքական միասնությունը: Այդ միասնության փայլուն ցուցադրումը հանդիսացավ կոմունիստների և անկուսակցականների ստալինյան անխորտակելի բլոկի հաղթանակը ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի և միութենական հանրապետությունների Գերագույն Խորհուրդների ընտրություններում: «Հաշվետու ժամանակաշրջանի կարևորագույն արդյունքներից մեկն այն է, որ նա հասցրեց յերկրի ներքին դրության հետագա ամրապնդման, խորհրդային կարգերի հետագա ամրապնդման» (Ստալին):

Սոցիալիզմի հաղթանակը ԽՍՀՄ–ում ձեռք և բերված կուսակցության և խորհրդային ժողովրդի թշնամիների դեմ՝ ֆաշիստական հետախուզությունների տրոցկիստական–բուխարինական և բուրժուա–նացիոնալիստական գործակալների դեմ մղած անհաշտ պայքարում: Ֆաշիստական հետախուզությունների գործակալների ջախջախումը, վորոնք ճգնում եյին խանգարել սոցիալիզմի կառուցումը ԽՍՀՄ–ում և մեր ժողովուրդը սարկության մատնել կապիտալիստների ու կալվածատերերի ձեռքը, այդ ջախջախումը հանդիսանում է բոլշևիկյան կուսակցության և խորհրդային ժողովրդի նշանակալի հաղթանակը կապիտալիստական շրջապատման դեմ մղվող պայքարում:

Ժողովրդի թշնամիների դեմ մղած պայքարում մեր կուսակցությունն ամրապնդվեց ու կոփվեց: Համկ(բ)կ XVIII համագումարը ցույց տվեց բոլշևիկյան շարքերի անխորտակելի միասնությունը, կուսակցության միաձույլ համախմբվածությունը լենինյան–ստալինյան կենտրոնական կոմիտեի շուրջը, ընկեր Ստալինի շուրջը: «Քաղաքական գծի և ամենուրյա գործնական աշխատանքի տեսակետից հաշվետու ժամանակաշրջանը յեղել է մեր կուսակցության գլխավոր գծի լիակատար հաղթանակի ժամանակաշրջան» (Ստալին):

Համկ(բ)կ XVIII համագումարում տված իր պատմական զեկուցման մեջ ընկեր Ստալինը, զարգացնելով մարքսիզմ–լենինիզմը, շարադրեց սոցիալիստական պետության մասին ուսմունքը, հանճարեղ կերպով ընորոշեց բանվոր դասակարգի դիկտատուրայի ֆունկցիաների փոփոխումը պատմական զարգացման զանազան ետապներում:

Սոցիալիզմի համաշխարհային–պատմական հաղթանակների հետևանքով մահացավ ռազմական ճնշման ֆունկցիան մեր յերկրի ներսում, վորովհետև լիկվիդացիայի յե յենթարկված մարդու շահագործումը մարդու կողմից, վոչնչացված են շահագործող դասակարգերը: Ճնշման ֆունկցիայի փոխարեն յերևան յեկավ սոցիալիստական սեփականության պահպանման ֆունկցիան: Պահպանվել է և ամեն կերպ ամրապնդվում է արտաքին հարձակումից ԽՍՀՄ–ի ռազմական պաշտպանության ֆունկցիան, պահպանվել և ամրապնդվում են Կարմիր Բանակը, Կարմիր Նավատորմը, ինչպես և պատժիչ որգաններն ու հետախուզությունը: Պահպանվել և լիակատար զարգացում է ստացել բանվոր դասակարգի դիկտատուրայի տնտեսական–կազմակերպչական և կուլտուրական–դաստիարակչական գործունեության ֆունկցիան: «Յերկրի ներսում մեր պետության հիմնական խնդիրն այժմ տնտեսական–կազմակերպչական և կուլտուրական–դաստիարակչական խաղաղ աշխատանքի մեջ է: Ինչ վերաբերում է մեր բանակին, պատժիչ որգաններին և հետախուզությանը, ապա նրանք իրենց սուր ծայրով ուղղված են արդեն վոչ թե դեպի յերկրի ներսը, այլ նրանից դեպի դուրս, արտաքին թշնամիների դեմ» (Ստալին):

Ընկեր Ստալինը մարքսիզմ–լենինիզմը հարստացրեց խորհրդային ինտելիգենցիայի վերաբերյալ նոր ուսմունքով, մատնանշեց ինտելիգենցիայի մասին բարեկամական հոգատարության, նրա նկատմամբ հարգանքի, նրա հետ համագործակցության անհրաժեշտությունը՝ հանուն բանվոր դասակարգի և գյուղացիության շահերի:

Սոցիալիզմի մեծ հաղթանակները մեր յերկրում ստեղծել են բոլոր պայմանները սոցիալիստական հասարակության կառուցումն ավարտելու և սոցիալիզմից աստիճանաբար կոմունիզմին անցնելու համար: ԽՍՀՄ–ի զարգացման

մեջ այս նոր շրջանը մեր առջև դնում է նոր խնդիրներ։

10—15 տարվա ընթացքում մենք պետք է տնտեսական տեսակետից հասնենք և անցնենք գլխավոր կապիտալիստական յերկրներից։ Միայն այս պայմանով ԽՍՀՄ-ը կկրակնացնի անցումը սոցիալիզմից դեպի կոմունիզմը։

Համագումարը, վորպես հիմնական խնդիր, դրեց նաև աշխատավորների կոմունիստական դաստիարակությունը, նրանց գիտակցության միջից կապիտալիզմի մնացուկների լիկվիդացիան։

Ստալինյան յերրորդ հնգամյակի պատմական պլանի կատարումը պահանջում է անդուլ կերպով բարձրացնել հեղափոխական զգաստությունը, մերկացնել և անողոքաբար արմատախիլ անել տրոցկիստական-բուխարինական լրտեսներին ու բոլոր այլ դիվերսանտներին, հետախույզներին, վորոնք փորձում են խանգարել մեր շարժումն առաջ՝ դեպի կոմունիզմը։ «Զմոռանալ կապիտալիստական շրջապատման մասին, հիշել, վոր ոտարերկրյա հետախուզությունը մեր յերկիրը կուղարկի լրտեսներ, մարդասպաններ, վնասարարներ, հիշել այդ մասին և ամրապնդել մեր սոցիալիստական հետախուզությունը, նրան սիստեմատիկաբար ոգնելով՝ ջախջախելու և արմատախիլ անելու ժողովրդի թշնամիներին» (Ստալին)։

Կոմունիզմի կառուցման ուղղությամբ կատարվող ամբողջ վիթխարի աշխատանքի մեջ լենինյան-ստալինյան կոմսոմոլը հանդիսացել է և հանդիսանում է բոլշևիկյան կուսակցության հավատարիմ ռեզերվն ու մարտական ոգնականը։ Կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի և անձամբ ընկ. Ստալինի ղեկավարությամբ ու ոգնությամբ, ջախջախվեցին ժողովրդի ստոր թշնամիների բները կոմսոմոլում։ Ջախջախելով և վոչնչացնելով թշնամական բները, կոմսոմոլը ամրապնդեց իր շարքերը, ինչպես յերբեք, համախմբվեց բոլշևիկյան կուսակցության, Համկ(բ)Կ Կենտրոնական Կոմիտեյի, ժողովուրդների առաջնորդ ընկեր Ստալինի շուրջը։

Համկ(բ)Կ Կանոնադրությունը, վոր ընդունված է կուսակցության XVIII համագումարի կողմից, ե՛լ ավելի է բարձրացնում կոմսոմոլի դերը, վորպես կոմունիզմի կառուցման գործում կուսակցության մարտական ռեզերվի ու ոգնականի։ Համկ(բ)Կ-ի մեջ 18 տարեկան հասակից ընդունվելու իրավունքը բարձրացնում է կոմսոմոլի պատասխանատվությունը կոմսոմոլիստների և ամբողջ խորհրդային յերիտասարդության գաղափարական-քաղաքական դաստիարակության համար, պարտավորեցնում է ամեն կերպ ամրապնդել ու բարելավել կոմսոմոլի կազմակերպությունների աշխատանքը։

Համկ(բ)Կ XVIII համագումարը ՀԱՄԼԿՅԵՄ բոլոր կազմակերպություններից պահանջում է ե՛լ ավելի ակտիվ մասնակցություն պետական ու տնտեսական կյանքում, կադրերի ե՛լ ավելի արագ աճեցում, ներկոմսոմոլական աշխատանքի յենթարկումը դրան։

«ՀԱՄԼԿՅԵՄ-ը կուսակցության ակտիվ ոգնականն է ամբողջ պետական և տնտեսական շինարարության մեջ։ Կոմսոմոլի կազմակերպությունները պետք է գործնականում լինեն կուսակցական դիրեկտիվների ակտիվ կիրառողները սոցիալիստական շինարարության բոլոր բնագավառներում, մանավանդ այնտեղ, վորտեղ չկան կուսակցական սկզբնական կազմակերպություններ։

Կոմսոմոլի կազմակերպություններն ունեն լայն նախաձեռնության իրավունք՝ ձեռնարկության, կոլտնտեսության, խորհտնտեսության, հիմնարկի աշխատանքի այն բոլոր հարցերի քննարկման և համապատասխան կուս. կազմակերպությունների առջև դնելու առաջարկում, վորոնք կապված են դրանց գործունեության մեջ յեղած թերությունների վերացման և աշխատանքը բարելավելու, սոցիալիստական մրցությունն ու հարվածայնությունը կազմակերպելու, մասսայական կամպանիաներն անցկացնելու և այլնի գործում նրանց անհրաժեշտ ոգնություն ցույց տալու խնդիրների հետ» (Համկ(բ)Կ Կանոնադրություն)։

ՀԱՄԼԿՅԵՄ Կենտրոնական Կոմիտեյի VIII պլենումը վորոշում է.

1. Պարտավորեցնել կոմսոմոլի բոլոր կազմակերպություններին, ՀԱՄԼԿՅԵՄ բոլոր անդամներին՝ հաստատակամորեն ու համառորեն աշխատել ՀԱՄԿ(բ)Կ XVIII համագումարի վորոշումների հաջող կենսագործման համար։

2. Ծավալել ՀԱՄԿ(բ)Կ XVIII համագումարի վորոշումների լայն պարզաբանումը կոմսոմոլիստների ու խորհրդային յերիտասարդության մեջ, ինչպես նաև ոգնել կուսակցական կազմակերպություններին՝ այդ աշխատանքն ամբողջ բնակչության մեջ կատարելու գործում։

3. Կոմսոմոլի բոլոր կազմակերպությունների հատուկ ուշադրությունը հրավիրել այն բանի վրա, վոր անհրաժեշտ է վճռականորեն բարելավել ամբողջ խորհրդային յերիտասարդությանը մարքսիզմ-լենինիզմի վոգով, բոլշևիզմի վոգով դաստիարակելու աշխատանքը։ Այս կարևորագույն խնդրի լուծումը կոմսոմոլի բոլոր կազմակերպություններից պահանջում է կոմունիզմի կառուցման ուղղությամբ կատարվող պրակտիկ աշխատանքը զուգակցել խորհրդային յերիտասարդության գաղափարական դաստիարակման աշխատանքի հետ։ Կոմսոմոլի կազմակերպությունները պարտավոր են իրենց ամբողջ աշխատանքով յերիտասարդության մեջ դաստիարակել խորհրդային հայրենասիրության, մոբիլիզացիոն պատրաստության բարձր զգացմունք։ Յուրաքանչյուր կոմսոմոլիստ պետք է պատրաստ լինի ամեն մի բոպե զենքը ձեռքին պաշտպան կանգնելու իր հայրենիքին։

4. Ապահովել կոմսոմոլի կազմակերպությունների ավելի ակտիվ մասնակցությունը պետական ու տնտեսական աշխատանքում։ Կոմսոմոլի կազմակերպությունները պարտավոր են ել ավելի մեծ ակտիվությամբ ոգնել կուսակցությանն ու կառավարությանը՝ սոցիալիստական պետության ու նրա բոլոր որգանների հետագա ամրապնդման ուղղությամբ կատարվող աշխատանքում։ Կոմսոմոլը պետք է ակտիվ կերպով պայքարի սոցիալիստական սեփականության

պահպանման, աշխատանքային կարգապահության ամրապնդման, ստախանովյան շարժման ծավալման ու աշխատանքի արտադրողականության բարձրացման, կադրերի ակտիվ պատրաստման ու առաջքաշման համար, պատմական խնդրի լուծման համար, այն է՝ մոտական 10—15 տարվա ընթացքում տնտեսական տեսակետից հասնել ու առաջ անցնել դլխավոր կապիտալիստական յերկրներից։

Պետական և տնտեսական աշխատանքի մեջ իրենց ամբողջ մասնակցությունը կոմսոմոլի կազմակերպությունները պետք է կառուցեն՝ յելնելով կուսակցության և կառավարության վորոշումներից, հաշվի առնելով ձեռնարկության, հիմնարկի, կոլտնտեսության, բուհի, դպրոցի կոնկրետ խնդիրները։

5. Յերևան բերել ձեռներեցություն, պաշտպանել կոմսոմոլիստների և արտամիութենական յերիտասարդության ամեն մի նախաձեռնություն, վորն ուղղված է դեպի ստալինյան յերրորդ հնգամյակի պլանների հաջող կատարումը։

Հավանություն տալ Լ. Մ. Կագանովիչի անվան Պրոժեկտորային գործարանի յերիտասարդության և Տուլայի մարզի գյուղատնտեսության առաջավորների նախաձեռնությանը, ստալինյան յերրորդ հնգամյակի անվան սոցիալիստական մրցության մեջ յերիտասարդության ունենալիք մասնակցության վերաբերյալ։ Մրցության մեջ ներդրավել ամբողջ յերիտասարդությանը և ապահովել ստանձնած պարտավորությունների բոլշևիկյան կատարումը։

Դլխավորել յերիտասարդ կոլտնտեսականների և կոլտնտեսուհիների պայքարը 1939 թվի գյուղատնտեսական աշխատանքների հաջող կատարման համար, Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսին պատրաստվելու և մասնակցելու իրավունքի համար։ Պաշտպանել անվանի տրակտորիստուհիների նախաձեռնությունը՝ առանց արտադրությունից կտրվելու 100 հազար աղջիկ տրակտորիստուհիներ պատրաստելու մասին։ Լայնորեն արմատավորել աշխատանքի ողակային կազմակերպումը։ Ամեն կերպ տարածել լավագույն ողակների աշխատանքի փորձը, ապահովել նրանց մեջ յերիտասարդության առաջավոր դերը։

6. Գրակտիկ ոգնություն ցույց տալ պետական որդաններին՝ անտառային արդյունաբերության, ծովային ու գետային տրանսպորտի հետ մնալը լիկվիդացիայի յենթարկելու գործում: Ակտիվ մասնակցություն ունենալ Հեռավոր Արևելքի բնակեցման, նրա բնական հարստությունների յուրացման առաջարկում:

7. Խոշորագույն կառուցումներին և ժողովրդական տնտեսության ու պաշտպանական աշխատանքի վճռական տեղամասերին ՀամԼԿՅԵՄ-ի կողմից պրակտիկ ոգնություն ցույց տալու համար ապահովել ամբողջ կոմսոմոլի շեֆությունը ԽՍՀՄ-ի ծովային և ովկիանոսային մեծ նավատորմերի, Վոլգայի և Ուրալի միջև «Յերկրորդ Բաքվի» ստեղծման, Մերձմոսկովյան ածխային ավազանի զարգացման, Խորհուրդների պալատի շինարարության, Կույբիշևյան հիդրոհանգույցի, Ակմոլինսկ—Կարտալի նոր յերկաթուղու և «Ամուրստալստրոյի» կառուցման նկատմամբ:

Շեֆությունը պետք է կրի գործնական ու պրակտիկ բնույթ· յերիտասարդության մորիլիզացիա նորակառույցներում աշխատելու համար, կառուցողների ու շահագործման ասպարեզում աշխատողների կադրերի պատրաստում, պայքար հանուն այն բանի, որ ձեռնարկությունները ժամկետին կատարեն նորակառույցների համար ընդունված պատվերները, սարքավորման ու շինարարական նյութերի կանոնավոր, առանց ուշացումների փոխադրումը տրանսպորտի կողմից, կուլտուրական-քաղաքական աշխատանքի կանոնավորում, կենցաղային պայմանների բարելավում և այլն:

8. Բացառիկ նշանակություն տալով ընկեր Ստալինի կողմից առաջադրված խնդրին՝ արդյունաբերությանը կադրեր տալ կոլտնտեսություններից, պարտավորեցնել կոմսոմոլի կազմակերպություններին՝ անհրաժեշտ աշխատանք կատարել կոլտնտեսություններից ամեն տարի արդյունաբերության մեջ աշխատելու համար առնվազն մեկ ու կես միլիոն յերիտասարդ կոլտնտեսականներ ուղարկելու ուղղությամբ:

Առաջարկել ձեռնարկությունների կոմսոմոլի կազմակերպություններին՝ պատրաստվել այդ կադրերի դիմավորմանը, ոգնություն ցույց տալ նրանց վորակավորում ձեռք բերելու, ուսուցման, կենցաղի բարեկարգման գործում:

9. Պլենումն ընդգծում է, վոր այն ձեռնարկությունների, կոլտնտեսությունների և հիմնարկների կոմսոմոլի կազմակերպությունների վրա, վորոնցում չկան սկզբնական կուսակցական կազմակերպություններ, դրվում է հատուկ պատասխանատվություն՝ կուսակցության և կառավարության դիրեկտիվների հաջող կենսագործման համար:

Պարտավորեցնել կոմսոմոլի բոլոր քաղկոմներին, մարզկոմներին, յերկրկոմներին, միութենական հանրապետությունների Կենտկոմներին՝ հատուկ ուշադրություն դարձնել այդ կազմակերպությունների աշխատանքի վրա, ապահովել նրանց ամենորյա ու կոնկրետ ղեկավարումը:

10. Նշելով կոլտնտեսություններում կոմսոմոլի կազմակերպությունների ստեղծման մասին ՀամԼԿՅԵՄ Կենտրոնական Կոմիտեի 6-րդ պլենումի վորոշման անբավարար կատարումը, պարտավորեցնել կոմսոմոլի մարզկոմներին, յերկրկոմներին, միութենական հանրապետությունների Կենտկոմներին արմատապես բարելավել կոլտնտեսային առաջավոր յերիտասարդությանը կոմսոմոլի մեջ ներգրավելու գործի ղեկավարումը, ապահովել կոմսոմոլի կազմակերպությունների ստեղծումը բոլոր կոլտնտեսություններում, ամրապնդել փոքրաթիվ կազմակերպությունները:

11. Պլենումը նշում է, վոր կոմսոմոլի մարզկոմները, յերկրկոմները, միութենական հանրապետությունների Կենտկոմները միանգամայն անբավարար կերպով են ղեկավարում կոմսոմոլի և պիոներական կազմակերպությունների աշխատանքը դպրոցներում, մանավանդ գյուղական շրջաններում: Ուսուցիչը, վորին վստահված է աճող սերնդի կոմունիստական դաստիարակության և կրթության գործը, հարկ յեղած ուշադրությունը չի վայելում կոմսոմոլի շատ կազմակերպությունների կողմից: Թույլ է պայքար մղվում յերկրորդ-տարեցիության դեմ, խուլիգանության առանձին վիճակների, դպրոցում վատ կարգապահության դեմ:

Պլենումը կոմսոմոլի կազմակերպություններին պարտավորեցնում է լիկվիդացիայի յենթարկել մի շարք տեղերում գոյություն ունեցող վոչ ճիշտ վերաբերմունքը դեպի խորհրդային ուսուցիչը, ամենորյա ոգնություն ցույց տալ նրան մարքս-լենինյան գիտությանը տիրապետելու, յերեխաների դաստիարակության և ուսուցման գործում:

Ոգնություն ցույց տալ ժողովրդական կրթության որգաններին՝ ուսուցիչների կադրերի պատրաստման պլանները կատարելու, յերկրորդ-տարեցիությունը լիկվիդացիայի յենթարկելու, դպրոցական շինարարության, դպրոցների նորոգման պլանները կատարելու, վառելիքի հայթայթման, դասագրքերի գնման, դասագրքերի, ուսումնական պիտույքների վաճառքը կազմակերպելու գործում:

Վճռականորեն վերջ դնել կոմսոմոլի ու պիոներական կազմակերպությունների աշխատանքի թերագնահատմանը դպրոցում: Ամրապնդել կոմսոմոլի դպրոցական կազմակերպությունները, դրանք դարձնել կուսակցության և կառավարության դիրեկտիվների իսկապես ակտիվ կիրառողներ:

Դպրոցում կոմսոմոլի ամբողջ աշխատանքի ղեկավարումն ամրապնդելու նպատակով, անհրաժեշտ դտնել Համ. ԼԿՅԵՄ Կենտրոնական Կոմիտեյում, միութենական հանրապետությունների կոմսոմոլի Կենտկոմներում, մարզկոմներում, յերկրկոմներում, ոկրուգկոմներում, քաղկոմներում դպրոցական յերիտասարդության և պիոներների մեջ կատարվող աշխատանքի գծով քարտուղարի պաշտոն սահմանելը:

12. Խորհրդային ինտելիգենցիայի նոր կադրերի դաստիարակության գործում մեծ նշանակություն ունի բուհերի, բուհերի, տեխնիկումների և գիտա-հետազոտական ինստիտուտների կոմսոմոլի կազմակերպությունների աշխատանքը:

Պլենումը պարտավորեցնում է կոմսոմոլի քաղկոմներին, մարզկոմներին, ոկրուգկոմներին, յերկրկոմներին, միութենական հանրապետությունների Կենտկոմներին՝ ապահովել բուհերի, բուհերի, տեխնիկումների և գիտա-հետազոտական ինստիտուտների կոմսոմոլի կազմակերպությունների աշխատանքի բոլշևիկյան ու կոնկրետ ղեկավարումը:

13. Ուժեղացնել կոմսոմոլի կազմակերպությունների աշխատանքը՝ Խորհրդային Միության պաշտպանական հզորության հետագա ամրապնդման ուղղությամբ: Ամբողջ յերիտասարդությանը դաստիարակել խորհրդային հայրենասիրության, հայրենիքի նկատմամբ անձնազոհ սիրո, ամեն մի րոպե Խորհրդային Միության սահմաններին պաշտպան կանգնելու պատրաստակամության վոգով:

Ամեն կերպ ամրապնդել կոմսոմոլի քաղաքացիական կազմակերպությունների կապը Կարմիր Բանակի և Ռազմա-Ծովային Նավատորմի կոմսոմոլի կազմակերպությունների հետ:

Պարտավորեցնել կոմսոմոլի մարզկոմներին, յերկրկոմներին, միութենական հանրապետությունների Կենտկոմներին՝ ոգնել Պաչը-Ավիաքիմի կազմակերպություններին և ֆիզկուլտուրային ընկերություններին կադրերի ընտրության գործում: Մասսայական պաշտպանական և ֆիզկուլտուրային կազմակերպություններում աշխատանքի առաջ քաշել այն կոմսոմոլիստներին, վորոնք ակտիվ կերպով յերևան են բերել իրենց քաղաքական ու գործնական հատկությունները: Ակտիվ մասնակցություն ունենալ ամբողջ մասսայական-պաշտպանական աշխատանքի ամրապնդմանը—աերոակումբների, հրաձգարանների, պաշտպանական ու ֆիզկուլտուրային խմբակների գործունեության բարելավմանը և այլն: Պարտադիր համարել, վորպեսզի կոմսոմոլի յուրաքանչյուր ակտիվիստ տիրապետի ռազմական մասնագիտությանը և ոգնի յերիտասարդության մեջև ռազմական գիտելիքների լայն արմատավորմանը::

Սիստեմատիկ աշխատանք կատարել Կարմիր Բանակի և Ռազմա-Ծովային Նավատորմի համար արժանավոր համալրում պատրաստելու ուղղությամբ: Ապահովել ամենորյա ղեկավարությունը հատուկ դպրոցների կոմսոմոլի կազմա-

կերպությունների և նախազորակոչիկ-կոմսոմոլիստների նկատմամբ:

14. Պարտավորեցնել կոմսոմոլի կազմակերպություններին՝ ե՛լ ավելի ակտիվ կերպով ոգնել կուսակցական, խորհրդային ու տնտեսական որգաններին՝ քաղաքների ու գյուղերի բարեկարգման աշխատանքում, խորհրդային առևտրի հետագա զարգացման, ակումբների, պարկերի, թատրոնների, կինոների գործունեությունը բարելավելու ասպարեզում: Պարտավորեցնել կոմսոմոլի շրջկոմներին, քաղկոմներին, մարզկոմներին, յերկրկոմներին, միութենական հանրապետությունների Կենտկոմներին՝ վճռականորեն վերջ դնել խանութների, կուլտուրական հիմնարկների, կոմունալ տնտեսության ձեռնարկությունների կոմսոմոլի կազմակերպությունների նշանակության թերագնահատմանը, բարելավել ղեկավարությունն այդ կազմակերպությունների նկատմամբ և ոգնել նրանց պրակտիկ հարցերի լուծման գործում:

Հատուկ ուշադրություն նվիրել կին-յերիտասարդության կուլտուրական-կենցաղային սպասարկման կազմակերպմանը, հոգ տանել մանկապարտեզների, մսուրների աշխատանքը բարելավելու մասին, յերիտասարդ աշխատավորուհիների համար ստեղծել ուսուցման, աճման, առաջ քաշվելու բոլոր պայմանները:

15. Պրակտիկայի մեջ մտցնել ակտիվի պարբերաբար զումարվող ժողովներն ինչպես քաղաքներում, այնպես և շրջաններում, այդ ժողովներում քննության առնել պետական և տնտեսական կյանքին կոմսոմոլի մասնակցության հետ կապված զանազան հարցեր:

16. Համ Կ(բ)Կ-ի մեջ ընդունելության նոր պայմանները կոմսոմոլի կազմակերպությունների վրա դնում են մեծ պատասխանատվություն՝ կոմսոմոլիստների և կոմսոմոլիստկաների գաղափարական-քաղաքական դաստիարակության, բոլշևիկյան կոփման գործի համար:

Պլենումը պարտավորեցնում է կոմսոմոլի բոլոր կազմակերպություններին՝ կոմսոմոլիստների մեջ որը-որին դաստիարակել բոլշևիկյան հատկություններ, ՀամԼԿՅԵՄ անդամների լավագույն առաջավոր մասին նախապատրաստել Համկ(բ)Կ-ի մեջ ընդունվելու համար:

17. Նոր կադրերի արագ աճեցման ու առաջքաշման նպատակով, հնարավոր համարել կոմսոմոլի ղեկավար աշխատանքի ընտրելը՝ վորպես կոմսոմոլի մարզկոմների, յերկրկոմների, միութենական հանրապետությունների Կենտկոմների քարտուղարներ—3 տարվա կոմսոմոլի ստաժ ունեցող կոմսոմոլիստներին. ՀամԼԿՅԵՄ քաղկոմների, շրջկոմների քարտուղարներ—2 տարվա կոմսոմոլի ստաժ ունեցող կոմսոմոլիստներին:

18. Կոմսոմոլի նոր խնդիրները պահանջում են ամեն կերպ ուժեղացնել և ամրապնդել ներմիութենական դեմոկրատիան, կարգապահությունն ու կազմակերպվածությունը կոմսոմոլի կազմակերպություններում:

Պլենումը պարտավորեցնում է կոմսոմոլի բոլոր կազմակերպություններին՝ վճռականորեն կասեցնել կոմսոմոլիստների իրավունքների վոտնահարման ամեն տեսակի փորձերը: Պարզաբանել բոլոր կոմսոմոլիստներին, վոր նրանք իրավունք ունեն կոմսոմոլի ժողովներում քննադատելու կոմսոմոլի ամեն մի աշխատողի, անձնական մասնակցություն պահանջելու այն բոլոր դեպքերում, յերբ վորոշումներ են կայացվում կոմսոմոլիստի գործունեության կամ վարքի մասին, ամեն մի հարցով դիմելու ԼԿՅԵՄ մարզկոմին, յերկրկոմին և միութենական հանրապետության Կենտկոմին, ընդհուպ մինչև ՀամԼԿՅԵՄ Կենտկոմին:

19. Զթույլատրել ՀամԼԿՅԵՄ անդամությունից վտարելը չնչին զանցանքների համար (անդամավճարները ժամանակին չմուծելը, ժողովից ուշանալը կամ չներկայանալը և այլն): Վտարումների վերաբերյալ բոլոր գործերի քննության ժամանակ ապահովել ուշադիր և զգայուն մոտեցումը, ճշգրիտ և պարզ կերպով փաստարկել վտարման պատճառները: Սխալ համարել կոմսոմոլիստների վտարումը

ՀամԼԿՅԵՄ-ից՝ սոցիալապես խորթ տարրերի հետ նրանց ունեցած ազգակցության հատկանիշների պատճառով:

ՀամԼԿՅԵՄ անդամությունից վտարելու վերաբերյալ վորոշումները պետք ե հաստատվեն ՀամԼԿՅԵՄ մարզկոմի, յերկրկոմի կողմից: Մինչև ՀամԼԿՅԵՄ մարզկոմի, յերկրկոմի կողմից վորոշում կայացնելը կոմսոմոլի տոմսը մնում ե կոմսոմոլիստի ձեռքում և նա իրավունք ունի հաճախելու կոմսոմոլի ժողովներին:

20. Սահմանել, վոր կոմսոմոլից կատարվող վտարումների վերաբերյալ վորոշումները կոմսոմոլի համապատասխան կազմակերպությունների կողմից հաստատվում և ապելլացիաները քննության են առնվում վոչ ուշ քան դրանք ստացվելու որվանից յերկշաբաթյա ժամկետում:

21. ՀամԼԿՅԵՄ շրջկոմներին իրավունք տալ հաստատելու սկզբնական կազմակերպությունների վորոշումները՝ ՀամԼԿՅԵՄ անդամության մեջ ընդունելու մասին, առանց ընդունվողին կանչելու:

22. Կոմսոմոլի կազմակերպությունների կազմակերպական-գործնական և գաղափարական ամբողջ աշխատանքը բարելավելու համար փոփոխություններ մտցնել կոմսոմոլի որգանների կազմակերպական կառուցվածքի մեջ.

ա) Լիկվիդացիայի յենթարկել բանվոր յերիտասարդության մեջ կատարվող աշխատանքի բաժինը, խորհրդային-առևտրական հիմնարկների յերիտասարդության մեջ կատարվող աշխատանքի բաժինը և ընդունելության ու վտարման հանձնաժողովը.

բ) Համ ԼԿՅԵՄ Կենտկոմում ունենալ հետևյալ բաժինները. 1) Կոմսոմոլի կազմակերպությունների կադրերի բաժին, 2) Կազմակերպական-հրահանգչական բաժին, 3) Պրոպագանդայի և ագիտացիայի բաժին, 4) Դպրոցական յերիտասարդության բաժին, 5) Պիոներների բաժին, 6) Ռազմա-ֆիզկուլտուրայի բաժին, 7) Գյուղացիական յերիտասարդության բաժին, 8) Ուսանող յերիտասարդության բաժին:

ԼԿՅԵՄ մարզկոմներում, յերկրկոմներում և միութենա-

կան հանրապետությունների կենտկոմներում—1) Կոմսոմոլի կազմակերպությունների կադրերի բաժին, 2) Կազմակերպական-հրահանգչական բաժին, 3) Պրոպագանդայի և ագիտացիայի բաժին, 4) Դպրոցական յերիտասարդության բաժին, 5) Պիոներների բաժին, 6) Գյուղացիական յերիտասարդության բաժին, 7) Ուսանող յերիտասարդության բաժին և 8) Ռազմա-ֆիզկուլտուրային բաժին:

Ոկրուգկոմներում—1) Կադրերի և կազմակերպական-հրահանգչական աշխատանքի բաժին, 2) Պրոպագանդայի և ագիտացիայի բաժին, 3) Դպրոցական յերիտասարդության բաժին, 4) Պիոներների բաժին, 5) Ռազմա-ֆիզկուլտուրային բաժին:

Քաղկոմներում և շրջկոմներում—1) Կադրերի և կազմակերպական-հրահանգչական աշխատանքի բաժին, 2) Պրոպագանդայի և ագիտացիայի բաժին, 3) Դպրոցական յերիտասարդության և պիոներների բաժին, 4) Ռազմա-ֆիզկուլտուրային բաժին:

23. Կոմսոմոլի այն կազմակերպություններում, վորոնք ունեն 100 կոմսոմոլիստից պակաս, թույլատրել կոմսոմոլի խմբակների ստեղծումն ըստ բրիգադաների, ագրեգատների, դասարանների և այլն:

3629
39

24. Կոմսոմոլի այն կազմակերպություններում, վորոնք ունեն ՀամԼԿՅԵՄ 500-ից մինչև 1000 անդամ, սահմանել մեկ ազատված վճարովի աշխատող. ՀամԼԿՅԵՄ 1000-ից մինչև 2000 անդամ ունեցող կազմակերպություններում՝ յերկու վճարովի աշխատող, մինչև 3000 ու ավելի անդամ ունեցող կազմակերպություններում՝ 3—4 վճարովի աշխատող:

25. Պարտավորեցնել ԼԿՅԵՄ մարզկոմներին, յերկրկոմներին, ազգային հանրապետությունների կենտկոմներին՝ ապահովել մամուլում կոմսոմոլի խնդիրների լայն պարզաբանումը, վորոնք առաջադրվեցին Համ Կ(բ)Կ XVIII համագումարի կողմից, համագումարի վորոշումների կատարման ասպարեզում առաջավոր կազմակերպությունների փորձի

Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ-ССР

ցուցադրումը, կոմսոմոլի կազմակերպությունների թերությունների քննադատության ծավալումը:

* *
*

Պլենումը կոչ է անում լենինյան-ստալինյան կոմսոմոլի անդամներին և ամբողջ խորհրդային յերիտասարդությանը՝ ակտիվ, անձնվեր պայքար մղել Համկ(բ)կ XVIII համագումարի վորոշումների հաջող կատարման համար:

Պատմական նոր իրադրության մեջ ՀամԼԿՅԵՄ-ը պետք է իրեն ցույց տա վորպես ամբողջ խորհրդային յերիտասարդության մարտական կազմակերպիչ, բոլշևիկյան կուսակցության հավատարիմ ոգնական՝ անձնազոհ կերպով նվիրված Մարքսի—Ենգելսի—Լենինի—Ստալինի մեծ գործին:

ՊՐՈՊԱԳԱՆԴԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԿ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՅԵՎ ՀԱՄԼԿՅԵՄ ԿԵՆՏԿՈՄԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

ՀԱՄԼԿՅԵՄ ԿԵՆՏԿՈՄԻ VIII ՊԼԵՆՈՒՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՄԼԿՅԵՄ ԼԵՆԻՆԳՐԱԴԻ ՄԱՐԶԿՈՄԻ ՅԵՎ ԲԵԼՈՌՈՒՍԻԱՅԻ ԼԿՅԵՄ ԿԵՆՏԿՈՄԻ ԶԵԿՈՒՅՈՒՄՆԵՐԻ ԱՌԹԻՎ

Համ ԼԿՅԵՄ Կենտկոմի պլենումը նշում է, վոր «Համ-Կ(բ)Կ պատմության համառոտ դասընթացի» լույսընծայման կապակցությամբ Լենինգրադի մարզի և Բելոռուսիայի կոմսոմոլի կազմակերպություններում նշանակելի չափով ուժեղացավ յերիտասարդության հետաքրքրությունը հեղափոխական թեորիայի ուսումնասիրության նկատմամբ: Եվ ավելի աճում է քաղաքական գրականության պահանջը: Ակտիվ կերպով են անցկացնում լեկցիաները, զեկուցումները, տեսական կոնֆերանսները, կոնսուլտացիաները: Կոմսոմոլի թերթերի խմբագրությունները սկսեցին ավելի մեծ ուշադրություն դարձնել պրոպագանդային և ագիտացիային: Սկսվեց կոմսոմոլի մեջ պրոպագանդայի և ագիտացիայի ապարատի ստեղծումը: Շրջանային, քաղաքային, մարզային մի շարք կոմիտեներում պրոպագանդայի և ագիտացիայի բաժինների ղեկավարմանն առաջ քաշվեցին քաղաքականապես պատրաստված աշխատողներ (ՀամԼԿՅԵՄ Լենինգրադի մարզկոմ, քաղկոմ, Բելոռուսիայի ԼԿՅԵՄ Դրիսենսկի, Բիխովսկի ռայկոմները): Կոմսոմոլի ակտիվի մի մասը լրջորեն ձեռնամուխ յեղավ մարքսիզմ-լենինիզմի ուսումնասիրմանը, իր թեորիական և քաղաքական հետամնացության լիկվիդացիայի գործին (Լենինգրադի մարզի Կինգիսեպպեկի ոկրուգկոմը, Լենինգրադի Լենինյան, Վասիլյեվսկի-ոստրովյան ռայկոմները):

Սակայն ՀամԼԿՅԵՄ Կենտկոմի պլենումը նշում է, վոր

Լենինգրադի և մասնավորապես Բելոռուսիայի կոմսոմոլի կազմակերպությունների մեջ լուրջ թերություններ կան պրոպագանդայի վերաբերյալ Համկ(բ)կ կենտկոմի և Համ. ԼԿՅԵՄ կենտկոմի վորոշումները կատարելու գործում:

Գլխավոր թերությունն այն է, վոր կոմսոմոլի ղեկավար շատ աշխատողներ մինչև այժմ չեն ձեռնարկել Համ. Կ(բ)Կ պատմության խորն ուսումնասիրմանը (Լենինգրադի կոմսոմոլի մարզի Տոսնոյան, Ստարոռուսկի ռայկոմները, Բելոռուսիայի կոմսոմոլի Մինսկի մարզկոմ, Լոզոիսկի, Ստալինյան ռայկոմները):

Կոմսոմոլի Լենինգրադի մարզկոմը և Բելոռուսիայի ԼԿՅԵՄ կենտկոմը վատ են ընդհանրացնում և տարածում պրոպագանդայի կազմակերպման դրական փորձը, չեն մասսայականացնում կոմսոմոլի ղեկավար կադրերի և խորհրդային ինտելիգենցիայի կողմից Համկ(բ)Կ պատմության ինքնուրույն ուսումնասիրման լավ փորձը:

Կոմսոմոլի «Смена», «Сталинская молодежь» և «Чырвоная змена» թերթերը մինչև հիմա չեն ստեղծել թեորետիկորեն պատրաստված հեղինակների ակտիվ, չափազանց անբավարար են լուսաբանում կոմսոմոլի ղեկավար կադրերի և ինտելիգենցիայի կողմից ինքնուրույն ուսուցման փորձը, ցույց չեն տալիս, թե ինչպես են կոմյերիտական կազմակերպությունները կատարում պրոպագանդայի վերաբերյալ Համկ(բ)Կ կենտկոմի և Համ.ԼԿՅԵՄ կենտկոմի վորոշումները:

Միանգամայն անհանդուրժելի է այն փաստը, վոր Բելոռուսիայի կոմյերիտական մի շարք կազմակերպություններում՝ ընկած լինելով «հարյուր տոկոսային» ընդգրկման հետևից՝ նորից սկսեցին ստեղծել Համկ(բ)Կ XVIII համագումարի նյութերն ուսումնասիրող անթիվ քանակությամբ խմբակներ: Այդ վկայում է Համկ(բ)Կ կենտկոմի վորոշումը չմբռնելու մասին, վորոշում, վորը պահանջում եր, վորպեսզի հեղափոխական թեորիայի ուսումնասիրման մեջ դըբ-

խավոր մեթոդը լինի անհատական, ինքնուրույն աշխատանքը:

Բելոռուսիայի միջնակարգ շատ դպրոցներում կոմսոմոլի կոմիտեներն աշակերտության ուշադրությունը չեն կենտրոնացրել ընդհանուր պատմության և ԽՍՀՄ ժողովուրդների պատմության ուսումնասիրման վրա, վորոնք հիմք են կուսակցության պատմության խորը յուրացման համար: Դրա փոխարեն նույնիսկ 6—7-րդ դասարանների աշակերտներին կողմնորոշում են դեպի «Համկ(բ)Կ պատմության համառոտ դասընթացի» ուսումնասիրումը խմբակներում, տեսական կոնֆերենցիաների անցկացումը և այլն:

Լենինգրադի մարզկոմը և Բելոռուսիայի կոմսոմոլի Կենտկոմը չեն կատարել պրոպագանդայի մասին Համ.ԼԿՅԵՄ Կենտկոմի վորոշման այն կետը, վորը մարզկոմներին, յերկրկոմներին և միութենական հանրապետությունների կենտկոմներին պարտավորեցնում է մի ամսվա ընթացքում գյուղական ռայկոմները մշտական աշխատանքի ուղարկել վորակյալ պրոպագանդիստների:

Պրոպագանդայի և ագիտացիայի ապարատի ստեղծումը Լենինգրադի մարզի և Բելոռուսիայի կոմյերիտական մի շարք կազմակերպություններում դանդաղ է ընթանում: Պրոպագանդիստական ղեկավար կադրերի ընտրության նկատմամբ թեթևամիտ վերաբերմունքի, թեորետիկորեն անպատրաստ ընկերներին պրոպագանդայի և ագիտացիայի բաժինների վարիչների, հրահանգիչների և կոնսուլտանտների պատասխանատու աշխատանքում առաջ քաշելու փաստեր կան:

Համ.ԼԿՅԵՄ Կենտկոմի պլենումը նշում է վորպես լըրջագույն թերություն Լենինգրադի և Բելոռուսիայի կոմյերիտական կազմակերպություններում, և հատկապես գյուղական ռայոններում ագիտացիոն-մասսայական աշխատանքի անբավարար դրվածքը:

Համ.ԼԿՅԵՄ Կենտկոմի պլենումը պարտավորեցնում է կոմսոմոլի Լենինգրադի մարզկոմին և Բելոռուսիայի ԼԿՅԵՄ Կենտկոմին վճռականորեն ուղղել վերևում թվարկած սխալ-

ները, պարզաբանել կոմսոմոլի ամբողջ ակտիվին Համ. Կ(բ)Կ XVIII համագումարում ընկեր Ստալինի տված ցուցումը, թե՝

«Հարկավոր է վորպես աքսիոմա ընդունել, վոր ինչքան ավելի բարձր է պետական և կուսակցական աշխատանքի ուղածդ ճյուղի աշխատողների քաղաքական մակարդակը և մարքսիստական–լենինյան գիտակցականությունը, այնքան ավելի բարձր և ավելի արդյունավետ է բուն աշխատանքը, այնքան ավելի էֆեկտիվ կլինեն աշխատանքի արդյունքները, և ընդհակառակը, վորքան ավելի ցած է աշխատողների քաղաքական մակարդակը և մարքսիստական–լենինյան գիտակցականությունը, այնքան ավելի հավանական են աշխատանքի ձախողումները և տապալումները, այնքան ավելի հավանական է աշխատողների իրենց մանրացումն ու վերասերումը գործամոլ–մանրախնդիրների, այնքան ավելի հավանական է նրանց այլասերումը»։

ՀամԼԿՅԵՄ կենտկոմի պլենումը վորոշում է.

1. Կազմակերպել ընկեր Ստալինի զեկուցման, Համ. Կ(բ)Կ XVIII համագումարի վորոշումների խորն ուսումնասիրությունը, վորոնք հանդիսանում են բոլշևիկյան կուսակցության թեորիական նոր հզոր զենք, վորոնք նշում են սոցիալիզմից դեպի կոմունիզմ անցնելու ուղիները։

2. Մինչև ս/թ. մայիսի 10–ը կոմպլեկտավորել կոմսոմոլի ռայկոմների, քաղկոմների, մարզկոմների և թերթերի խմբագրությունների պրոպագանդայի և ագիտացիայի բաժինների շտատը։ Այդ աշխատանքում առաջ քաշել լավագույն պրոպագանդիստների, քաղաքականապես ստուգված և մարքսիստորեն կրթված ընկերների։

3. Ընդհանրացնել և տարածել մարքսիստական–լենինյան թեորիայի ուսումնասիրման գրական փորձը։ Առաջարկել Լենինգրադի և Բելոռուսիայի կոմյերիտական թերթերի խմբագրություններին սիստեմատիկորեն լուսաբանել, թե ինչպես են կատարվում պրոպագանդայի մասին Համ(բ)Կ կենտկոմի և ՀամԼԿՅԵՄ կենտկոմի վորոշումները։

4. Պարտավորեցնել ՀամԼԿՅԵՄ Լենինգրադի մարզկոմին և Բելոռուսիայի ԼԿՅԵՄ կենտկոմին ոգնել կոմյերիտական թերթերի խմբագրություններին թեորետիկորեն պատրաստված հեղինակների կոլեկտիվների կազմակերպմանը, կանոնավոր կերպով քննարկել և վերահսկել պրոպագանդայի հարցերի ուղղությամբ խմբագրությունների պլանների կատարմանը։

5. Ապահովել տեսական կոնֆերանսների իդեական բարձր մակարդակը։ Այն անցկացնել միայն խնամքով նախապատրաստելու պայմանով։

6. Արմատական կերպով լավացնել ագիտացիոն–մասսայական աշխատանքը։ Հասնել այն բանին, վոր ագիտատորների կադրեր ստեղծվեն սկզբնական ամեն մի կազմակերպության մեջ, ապահովել նրանց ամենորյա ղեկավարումը։

7. Առաջարկել ՀամԼԿՅԵՄ Լենինգրադի մարզկոմին և Բելոռուսիայի ԼԿՅԵՄ կենտկոմին սույն վորոշումը քննարկել պլենումներում։

Հանրային գրադարան
«Ոչ ազնիվ գործեր»
ՀՍՍՀ-ՍՍՀՄ
Ա. Մեհրաբյան
Պետական

Հայերեն թարգմանության խմբագիր Ս. Միքայելյան
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան
Սրբագրիչ Հ. Մանվելյան
Կոնտրոլ սրբագրիչ Լ. Արովյան

Գլավլիտի լիազոր № Տ—1716, հրատ. № 699,
Պատվեր № 110, տիրաժ 6000
Թղթի չափը $82 \times 108^{1}/_{16}$, 32.550 տպ. նիշ 1 տպ. մամուլում,
$1^{1}/_{2}$ տպ. մամուլ, $^{3}/_{4}$ թերթ թուղթ։
Հանձնված է արտադրության 4/VI 1939 թ.
Ստորագրված է տպագրելու 3/VII 1939 թ.
Գինը 20 կ.

Պետհրատ—Քաղաքական գրականության հրատարակչության տպարան,
Յերևան, Ալլահվերդյան № 65

ՀՀ Ազգային գրադարան
NL0187286

ԳԻՆԸ 20 Կ.

ПОСТАНОВЛЕНИЯ
VIII ПЛЕНУМА
ЦК ВЛКСМ

Армгиз—Издательство полит. литературы
Ереван, 1980